ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. հունիսի 13-ին Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) ՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Իրինա Ղափլանյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**
   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Բելգիայի Թագավորություն (Բրյուսել)

   2019թ. հունիսի 13-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   Եվրոպական Միություն

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**
   Մասնակցություն՝ ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի 2-րդ հանդիպմանը:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի 2-րդ հանդիպման շրջանակներում հանդես եկա «Շրջակա միջավայրի և կլիմայի վերաբերյալ» ելույթով, որն ընդգրկում էր հետևյալ կետերը.

   - Հայաստանի համար կլիմայի գործողության կարևորությունը ոչ միայն կայուն զարգացման, այլև կայունության և կայուն աճի ապահովման համատեքստում, նկատի առնելով նաև, որ Հայաստանն Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում համարվում է կլիմայի փոփոխության նկատմամբ 4-րդ խոցելի երկիրը: Կարևոր է այն փաստը, որ «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական Միության և ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի»

Ճանապարհային քարտեզի գրեթե կեսը պարունակում է այն միջոցառումները, որոնք նախատեսված են շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության գլուխներում: Այս գլուխներում ընդգրկված միջոցառումները կապահովեն 2019-2026թթ. ԵՄ-ի շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վերաբերյալ ԵՄ օրենսդրության հետ մոտարկումը: Վերջիններս կարևոր են նաև այն առումով, որ ապահովում են Հայաստանի կողմից վավերացված ավելի քան 20 բնապահպնական կոնվենցիաներով և Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորությունների փոխադարձ կապը:

- Շրջակա միջավայրի և կլիմայի բնագավառում Հայաստանի օրենսդրական դաշտը կարգավորվում է ավելի քան 20 օրենքներով, զուգահեռաբար զգալի քայլեր են ձեռնարկվում շրջակա միջավայրի քաղաքականության և օրենսդրության բարելավման համար, օրենսդրության մեծ մասի հայեցակարգային հիմունքների վերափոխման համար, որն առաջնորդվելու է «վճարում է աղտոտողը» սկզբունքով: Մի շարք փոփոխություններ արդեն մեկնարկել են, որոնցից մի քանիսն հաստատվել են, մասնավորապես, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների և ռիսկերի կրճատումը, շրջակա միջավայրի իրավական և ինստիտուցիոնալ դաշտի բարելավումը, ժամանակակից կառավարման համակարգերի ներդրումը, բնապահպանական թույլտվությունների և լիցենզիաների համակարգերի պարզաբանումը և դասակարգումը:
- Հայաստանի օրենսդրական դաշտում իհարկե առկա են մի շարք բացթողումներ, որոնք պահանջում են քաղաքականության մշակում, մասնավորապես՝ հուսալի բնապահպանական տվյալներ: Ներկայումս Հայաստանը ունի շրջակա միջավայրի մոնիտորինգի պարզ համակարգ, որը պարունակում է բնապահպանական տվյալների և ջրային ռեսուրսների մեծ մասը, հողերի և անտառների գույքագրումը, որոնք ըստ էության, թարմացված չեն: Տեղեկատվության և ապացույցների վրա հիմնված քաղաքական որոշումների կայացման համար երկրին անհրաժեշտ է ճշգրիտ մոնիտորինգի համակարգ, անտառի, հողի և ջրի վերաբերյալ նոր գույքագրում: Այս առումով ցանկալի է համագործակցել Եվրամիության հետ, որը շատ շահութաբեր կլինի: Նշեցի նաև այն փաստը, որ ունենք ԵՄ-ի առաջատար կազմակերպությունների հետ աշխատելու հնարավորություն՝ Հայաստանում անհրաժեշտ մոնիտորինգի

համակարգեր ստեղծելու համար: Արևելյան գործընկերության շրջանակներում մեկնարկած ԵՄ 4 Կլիմայի նախագիծը շատ խոստումնալից է, քանի որ մոնիթորինգի հետ կապված աշխատում ենք Եվրոպայում առաջատար որոշ կազմակերպությունների հետ, ինչպիսին Ավստրիայի բնապահպանական գործակալությունն է:

- Ընդգծեցի նաև այն փաստը, որ Հայաստանի շրջակա միջավայրի բնապահպանական ծրագրային ոլորտներից բխող 53 բնապահպանական միջոցառումները ներառված են ՀՀ կառավարության 2019-2023թթ. Գործողությունների ծրագրում: Այս շրջանակներում նախատեսվում է օրենսդրական կարգավորմանն ուղղված 11 միջոցառումներ՝ 1 հայեցակարգի և 2 ռազմավարական առաջնահերթությունների մշակում, կլիմայի փոփոխության ազգային հարմարվողականության ծրագիր, 3 ջրավազանների համար կառավարման ծրագրեր և 1 SPA: Խոսեցի ԵՄ ջրային նախաձեռնություն պլյուս ծրագրի գրանցած հաջողության մասին և այն, որ ցանկալի կլինի շարունակել համագործակցությունը այս ծրագրի շրջանակներում և զարգացնել մնացած ջրային ավազանների կառավարման պլանները:
- Հայաստանում շրջակա միջավայրի ոլորտում կան նաև այլ կարևոր զարգացումներ, մասնավորապես՝ պլաստիկ տոպրակների օգտագործման արգելումը: Այժմ Հայաստանի կառավարությունը շրջանառում է մինչև 2023թ. պլաստիկ տոպրակների արգելման մասին օրենքի նախագիծը, որն աշնանը կներկայացվի Խորհրդարան: Ուսումնասիրվում է պոլիէթիլենային տոպրակներին փոխարինման տարբերակները՝ ապակե և ալյումինե շշերը: Հայաստանն պարտավորություններ է ստանձնել CEPA- ի շրջանակներում և դրանից դուրս՝ իրականացնել շրջանաձև տնտեսության իրավական դրույթները և ներդնել ենթակառուցվածքներ: Եվ այս ոլորտում նույնպես կցանկանայինք ավելի խորացնել համագործակցությունը ԵՄ-ի հետ: Հաշվի առնելով, որ պլաստիկի խնդիրը երկկողմանի համագործակցությունից վեր է՝ առաջարկեցի մտածել Արևելյան գործընկերության շրջանակներում պլաստիկի աղտոտման դեմ պայքարի ծրագրի մեկնարկի մասին, օրինակ՝ «Եվրոպական Գործընկերություն՝ առանց պլաստիկի»:
- Սակայն Հայաստանը մշակում է նաև Թափոնների կառավարման ռազմավարություն, որը նախատեսում ենք շրջանառել սեպտեմբերին:

- Անցած շաբաթ Ազգային ժողովը միաձայն և վերջնական ընդունեց էլեկտրոմոբիլները ԱԱՀ-ից ազատելու վերաբերյալ օրենսդրական փոփոխությունը: Սա առաջին քայլն էր, որ Հայաստանը արձանագրեց էլեկտրական և միկրոէլեկտրական մեքենաների տարածումը խթանելու համար: Հաշվի առնելով ԵՄ-ի լայնածավալ փորձն այս ոլորտում, նույնպես ցանկություն ունենք համագործակցելու:
- Վերջապես, Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում և շարունակաբար աշխատում է հանքարդյունաբերության ոլորտում օրենսդրության բարելավման ուղղությամբ: Հայաստանի կառավարության համար առաջնահերթ է, որ երկրի տնտեսությունը պետք է ոչ միայն զարգանա էկոլոգիական անվտանգության լավագույն ստանդարտներին համապատասխան, այլև պետք է ապահովի ընդգրկուն տնտեսական աճ և շրջանառություն:
- Նշեցի նաև, որ շատ ողջունելի է, որ CEPA-ի գրեթե կեսը, և Ճանապարհային քարտեզի մեջ նախատեսված միջոցառումները ընդգրկում են շրջակա միջավայրի և կլիմայի ոլորտները:
- Էնդեմիկ բույսերի և կենդանիների անսովոր մեծ քանակության տեսակների շնորհիվ՝ ներառյալ Կովկասյան ընձառյուծը, Հայաստանը համարվում է աշխարհի կենսաբազմազանության 25 «թեժ կետ» ունեցողներից մեկը: 2019թ. Հայաստանում հայտարարվեց Կովկասյան ընձառյուծի պահպանության տարի և այս կապակցությամբ կազմակերպում ենք «Կովկասյան ընձառյուծի պահպանության մասին միջազգային գագաթնաժողով»: Օգտվելով առիթից, ցանկանում եմ հրավիրել ԵՄ համապատասխան պաշտոնյաներին՝ մասնակցելու գագաթնաժողովին և դառնալ Փոխըմբռնման Հուշագրի կողմ, որը կոչ է տարածաշրջանում կենսաբազմազանության՝ հատկապես ընձառյուծի պահպանության վերաբերյալ համագործակցության շարունակության:

Շրջակա միջավայրի նախարարի
տեղակալ՝

X _____

Իրինա Ղափլանյան